ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.11.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 35/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 14.10.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-35/14 բողոք), ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու), «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն), ներկայացրած 20.10.2014թ. N 09/2650 գրությունը և կից փաստաթղթերը, «ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2014թ. թիվ 2 և 09.10.2014թ. թիվ 3 արձանագրությունները, «Ֆիրմա Ալֆա», «Ջի Վի Էն» և «Կոմպասս» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը, Պատվիրատուի ուսումնագիտական միջոցառումների տեխնիկական ապահովման (այսուհետ՝ նաև «ՈՒՄՏԱ») բաժնի պետ Ա.Աղայանի կողմից տրամադրված 09.10.2014թ. մասնագիտական եզրակացությունը և կից ներկայացված համեմատական աղյուսակը, լսելով Կենտրոնում կազմակերպված քննարկումների ժամանակ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի և Պատվիրատուի ներկայացուցիչների կարծիքները, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-35/14 բողոքի վերաբերյալ Կենտրոնի 31.10.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

14.10.2014թ. ներկայացրած բողոքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ այս տարվա հունիսի սկզբին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի համապատասխան ծառայությունների խնդրանքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հաշվարկել և համալսարանին էր ներկայացրել Պատվիրատուի գլխավոր դահլիճում տեղադրված 2 հատ Mitsubishi XL-5980 պրոֆեսիոնալ ինստալացիոն LCD թվային պրոեկտորներ՝ նույն դասի ժամանակակից NEC պրոեկտորներով փոխարինելու նախագիծ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված այդ պրոեկտորները, թեև վաղուց արդեն բարոյապես հնացել են, բայց մինչ օրս էլ լիովին գործունակ են, իսկ գրեթե 8 տարի առաջ մշակված և իրագործված՝ Պատվիրատուին Polycom տեսակոնֆերանս երկու տեսախցիկով համակարգով և երկու հզոր ինստալիացիոն պրոեկտորներով որպես տեղեկատվության արտացոլման միջոց զինելու նախագիծը, մինչ օրս էլ շատ լուծումներով մնում է եզակի Հայաստանում:

Ընդ որում, սարքավորումների ամբողջ համալիրը կարող է հեշտությամբ արդիականացվել հնացած սարքերը նույնանման ժամանակակից սարքերով փոխարի-նելու եղանակով:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ում հաջողությամբ շահագործվում են 2 տասնյակից ավել Mitsubishi և արդեն իսկ NEC թվային պրոեկտորներ (Mitsubishi Electric ընկերությունը 2013թ. վերջին պրոեկցիոն սարքավորումների արտադրությունը դադարեցրել է, նախկինում մատակարարված պրոեկտորների սերվիսային աջակցությունն իրականացվում է մինչև 2019թ.), ինչպես նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված տեղեկատվության արտացոլման շատ այլ սարքեր:

Այս տարվա հունիսի սկզբին, վերը նշված նախագծի հիման վրա, Պատվիրատուն Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն, անցկացրել է շուկայի ուսումնասիրություն, իսկ 2014թ. հունիսի 25-ին հայտարարել է երկու հատ NEC

պրոֆեսիոնալ ինստալիացիոն պրոեկտորներ՝ հատուկ մոտորիզացված օբյեկտիվներով և մեկ հատ պահուստային լամպով (Չափաբաժին N 1) և երեք հատ գրասենյակային NEC պրոեկտորներ (Չափաբաժին N 2) ձեռք բերելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնահատող հանձնաժողովի 11.07.2014թ N 3 արձանագրության համաձայն՝ ելնելով նրանից, որ մասնակիցների առաջարկների արժեքը գերազանցում է 1-ին չափաբաժնի համար հատկացված գումարը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ընթացակարգի արդյունքները նշված չափաբաժնով ճանաչել են չկայացած, իսկ 2-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

2014թ. հուլիսի 11-ին Պատվիրատուն կրկին իրականացրել է շուկայի ուսումնասիրություն երկու հատ պրոֆեսիոնալ ինստալիացիոն՝ մոտորիզացված ոսպնյակներով՝ NEC պրոեկտորներ ձեռք բերելու նպատակով:

Ընդ որում, որպես պարտադիր պայման պահանջվել էր ապրանքի տեղադրումը, միացումը, փորձարկումը և պատվիրատուի անձնակազմի ուսուցումն արտադրող կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի կողմից, սարքավորումների արտադրող կազմակերպության պաշտոնական գործընկեր լինելու հավաստագիր և տվյալ մատակարարման համար արտադրող կազմակերպության կողմից տրված հեղինակայնացման հավաստագիր (MAF - Manufacturers Autorisation Form):

Համապատասխան առաջարկ Պատվիրատուի գնումների բաժին էր ներկայացվել 14.07.2014թ.:

Ավելի քան երկու ամիս անց՝ 25.09.2014թ., «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացել է էլեկտրոնային փոստով 22.09.2014թ. N 09/2308 նամակը՝ Պատվիրատուի կարիքների համար երեք չափաբաժնով (Չափաբաժին N 1՝ երկու հատ պրոֆեսիոնալ ինստալացիոն պրոեկտորներ մոտորիզացված ոսպնյակներով և երկու հատ պահուստային լամպերով, չափաբաժին N 2՝ մեկ հատ պրոֆեսիոնալ ինստալացիոն պրոեկտոր սովորական ոսպնյակով, չափաբաժին N 3՝ մեկ հատ սովորական գրասենյակային պրոեկտոր, անհասկանալի է, թե ինչ պատճառներով է կոչված

«պրոֆեսիոնալ») պրոեկցիոն սարքավորումներ ձեռք բերելու նպատակով «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» գնման ընթացակարգ անցկացնելու մասին:

Ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությունը բևեռում է հետևյալ փաստերի վրա՝

1. ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 35.1-րդ կետի համաձայն՝ մինչև գնումների հրավերների հաստատումը, բացառությամբ շինարարական ծրագրերի, գնահատող հանձնաժողովի անդամները պարտավոր են ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության համապատասխան շուկաները և կազմել գրավոր երաշխավորություն տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների շուկայական գների մասին՝ կցելով մանրամասն բացատրագիր նախահաշվային գնի ու շուկայական գնի համեմատության վերաբերյալ և ուսումնասիրությունը հիմնավորող փաստաթղթերը:

«ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ընթացակարգը հայտարարելուց առաջ շուկայի որևիցե նոր ուսումնասիրության մասին ոչինչ Ընկերությանը հայտնի չի եղել կամ էլ Պատվիրատուի կողմից ներկայումս դրա մասին չի հայտնվել ընկերությանը անհայտ պատճառներով:

2. «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ընթացակարգի շրջանակներում պահանջված պրոեկտորների տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ արտագրված են (աննշան սխալներով) Optoma Corp. (Թայվան) համապատասխան մակնիշների պրոեկտորներից:

3. Ընթացակարգի փաստաթղթերից՝ ներկայումս դեռ անհայտ պատճառներով, հանվել են նախկինում Պատվիրատուի կողմից ներկայացված պարտադիր պահանջները՝ ապրանքի տեղադրումը, միացումը, փորձարկումը և պատվիրատուի անձնակազմի ուսուցումն արտադրող կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի կողմից սարքավորումների արտադրող կազմակերպության պաշտոնական գործընկեր լինելու հավաստագիրը և տվյալ մատակարարման համար արտադրող կազմակեր-պության հեղինակայնացման հավաստագիրը (MAF):

4. Հայաստանի Հանրապետությունում (ի տարբերություն NEC մակնիշի պրոեկտորների, համապատասխան փաստաթղթերը ներկայացված են գնահատող հանձնաժողովին), Optoma ընկերության պաշտոնական սպասարկման կենտրոնը բացակայում է (http://www.optomaru.ru/aspcentres.aspx):

Արդյունքում, Optoma-ի սարքավորումը գնող ցանկացած տեղական գնորդի մոտ կտրուկ աճում է սարքավորման ընդհանուր տիրապետման արժեքը (TCO – Total Cost of Ownership), որը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ սարքավորման ձեռք բերման գնից և գնված սարքավորման սպասարկման գնից:

Ըստ բողոքաբերի, կոնկրետ սարքավորման ընտրությունը՝ գնորդի իրավունքն է, բայց ունենալով, մեղմ ասած, ոչ այնքան էլ դրական փորձ՝ կապված համալսարանում ավելի քան 20 հատ BenQ (Թայվան) մակնիշի պրոեկտորների շահագործման հետ, որոնք դասով և ֆունկցիոնալությամբ Optoma մակնիշին հավասարազոր են, արժ՞ե արդյոք կրկնել այս փորձը և ինչն է այդպիսի որոշման դրթապատճառը:

5. 26.09.2014թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ն կետի համաձայն, «ՇՀԱՊՁԲ -11/12-7 (ԵՊԲՀ)» էլեկտրոնային նամակով դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տալ պարզաբանում Ընթացակարգի հրավերի վերաբերյալ, թե արդյոք Պատվիրատուն ընդունո՞ւմ է մասնակիցների կողմից հեղուկ-բյուրեղային (LCD) 3 պանելների տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորների ներկայացումը:

Հաջորդ օրը՝ 27.09.2014թ, էլեկտրոնային նամակով գնահատող հանձնաժողովից ստացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ն կետի պահանջներին միանգամայն հակասող պատասխան, որտեղ ասված էր հետևյալը. «տվյալ պատասխանը կտրվի մասնակից կազմակերպությանն (ներին) ամփոփ արձանագրության տեսքով համարժեք ապրանքատեսակներ ներկայացնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանման /անձի/ կողմից տրամադրված մասնագիտական եզրակացության հիման վրա»:

Ընդ որում, հանձնաժողովը պարզապես անտեսել էր այն փաստն, որ ոչ միայն կոպտորեն խախտում է գնումների մասին ՀՀ օրենսդրությունը, այլ նաև զուտ

տրամաբանության օրենքները՝ պարզաբանումները մասնակիցներին պետք է տրամադրվեն հենց գնային առաջարկները պատրաստելու համար, այլ ոչ թե դրանք հանձնաժողովին արդեն իսկ ներկայացնելուց հետո:

6. «ՇՀԱՊՁԲ-11/12-7(ԵՊԲՀ)» գնման գործընթացին մասնակցած չորս ընկերություններից երեքն իրենց առաջարկներում ներկայացրել են տարբեր գներով Optoma պրոեկտորներ:

NEC Display Solutions և «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությունները, ցանկանալով շարունակել երկարամյա ու արդյունավետ համագործակցությունը Պատվիրատուի հետ, տվյալ գործընթացի համար պատրաստել էին հատուկ՝ իսկապես եզակի և նախադեպը չունեցող գներով առաջարկ: Ընկերությունը ստորև բերված աղյուսակում նշել է բոլոր մասնակիցների գնային առաջարկներն (ԱԱՀ ներառած):

Մասնակից	Չափաբաժին N1	Չափաբաժին N2	Չափաբաժին N3
«Սոֆթլայն Ինտերնէշնլ» (Հայաստան) ՍՊԸ	AMD 14,200,200.00 (Optoma EH7700)	AMD 2,754,600.00 (Optoma EH505)	AMD 825,750.00 (Optoma X501)
«Կոմպասս » ՍՊԸ	AMD 13,980,000.00 (Optoma EH7700)	AMD 2,660,280.00 (Optoma EH505)	AMD 770,280.00 (Optoma X501)
«Ջի Վի Էն» ՍՊԸ	AMD 10,650,000.00 (Optoma EH7700)	AMD 2,970,000.00 (Optoma EH505)	AMD 1,740,000.00 (Optoma EH501)
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ	AMD 9,042,000.00 (NEC PX750U)	AMD 1,455,000.00 (NEC PA522U)	AMD 579,000.00 (NEC P501X)

7. NEC Display Solutions ընկերությունը (Ճապոնիա), Christie (Կանադա) և Barco (Բելգիա) ընկերությունների հետ մեկտեղ, հանդիսանում է արդի լայնաֆորմատ կինոթատրոնների պրոեկտորներ արտադրող աշխարհի ընդամենը երեք ընկերություններից մեկը, ում արտադրանքը սերտիֆիկացված է՝ ըստ թվային կինեմատոգրաֆի աշխարհում ընդունված միակ Digital Cinema Initiative (DCI) ստանդարտի:

NEC-ի բոլոր ինստալիացիոն բիզնես-պրոեկտորները համապատասխանում են Hollywood Quality Video (HQV) ստանդարտին, իսկ ամբողջ արտադրանքը պատկանում է Hi-End դասին:

Ըստ բողոքաբերի՝ NEC-ի Hi-End արտադրանքի և Optoma-յի արտադրանքի մեջ եղած տարբերությունը՝ մոտավորապես հավասարազոր է «Mercedes» և «Օպել» ավտոմեքենաների մեջ առկա տարբերությանը: Նույնը, բնականաբար, վերաբերվում է և սարքավորումների գներին:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայումս առնվազն անհասկանալի է, թե ինչպես է պատահել, որ սովորաբար մրցույթներում առաջարկվող հատուկ գինը, օրինակ՝ 1-ին չափաբաժնով պահանջված Optoma EH7700 պրոեկտորի համար, երկու վերոհիշյալ ընկերությունների կողմից ներկայացված առաջարկներում գերազանցում է հավասարազոր NEC պրոֆեսիոնալ ինստալացիոն պրոեկտորի մանրածախ գինը, իսկ երրորդ ընկերության նույն պրոեկտորի համար առնվազն 2.3 միլիոն ՀՀ դրամ ավելի էժան առաջարկում հանձնաժողովը հանկարծակի հայտնաբերում է անհամապատասխանություններ կից ներկայացված գնի հաշվարկում:

Ընդ որում, երկու վերոնշյալ արձանագրություններում էլ գնահատող հանձնաժողը դիտարկում է «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը որպես սահմանված պահանջներին համապատասխան:

8. Ս.թ. հոկտեմբերի 1-ի թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողը որոշում է ընդունել՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, հայտերի անփոփ գնահատման նիստը հետաձգել մինչև մասնակիցների կողմից որպես համարժեք ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը: Սակայն, Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում, հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընկերությունը հայտնել է, թե այստեղ առաջ է գալիս մի ողջամիտ հարց, թե որտե՞ղ էր հանձնաժողովը մտադիր ստանալ մասնագիտական եզրակացությունը, եթե հանրապետությունում պարզապես չկա որևիցե կողմնակի՝ պրոեկցիոն տեխնոլոգիաների բնագավառում քիչ թե շատ որոշ կոմպետենտություն ունեցող կազմակեր-

պություն: Տեղական մի շարք SS-վերավաճառողների՞ց, որ զբաղված են այսպես կոչված «տուփ տեղափոխելու գործով» (Box Moving), և ներմուծում են էժանագին և հաճախ հնացած կամ նույնիսկ արտադրությունից հանված պրոեկտորներ Դուբայից:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային առաջարկում յուրաքանչյուր առանձին չափաբաժնի վերաբերյալ ներկայացվել են նույնիսկ տեխնիկայից բավական հեռու մարդուն հասկանալի, մանրամասն համեմատական աղյուսակներ, որտեղ կետ առ կետ կատարվել է սարքավորումների նվազագույն տեխնիկական բնութագրերի և վերը նշված Optoma և NEC պրոեկտորների համապատասխան բնութագրերի մանրամասն համեմատությունը:

Ընդ որում, հանձնաժողովի աշխատանքը դյուրին դարձնելու համար այս կամ այն մակնիշի պրոեկտորների առավելություններն առանձնացվել են գույնով:

Առաջարկված NEC պրոեկտորների նվազագույն տեխնիկական պահանջներին համապատասխան լինելը վերլուծելու համար գնահատող հանձնաժողովին բավական կլիներ արտադրողի WEB կայքից ներբեռնել ընդհամենը երկու էջանի մեկական տեղեկատվական բրոշյուր (ռուսերեն կամ անգլերեն լեզվով) պահանջվող տեխնիկական բնութագրերով:

Ընկերության կարծիքով, հանձնաժողովին մնում էր միայն ստուգել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային առաջարկում բերված վերը նշված համեմատական աղյուսակների կոռեկտությունը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուն ուղղակիորեն խախտել է Կարգի 110-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

9. Կարգի 36-րդ կետի համաձայն. «Եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, ով՝ զեկուցագիրն ստանալու օրը՝ հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև հինգ աշխատանքային օրով, հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը (իրավաբանին կամ հրավիրված մասնագետին) մինչև

կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր: Իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացության ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման:

Իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝ հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ՝ հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը»:

10. Բողոքաբերը հայտնել է, որ ուղղակիորեն խախտելով Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովը 01.10.2014թ. թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետով ընդունած որոշմամբ, այն է. «Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով հայտերի անփոփ գնահատման նիստը հետաձգել մինչև մասնակիցների կողմից, որպես համարժեք ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը», նույնպես ուղղակիորեն խախտել է Կարգի 36-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները և, ըստ էության, հափշտակելով պատվիրատուի ղեկավարի իրավունքները լիովին ինքնուրույն, ելնելով այսպես կոչված «աշխատանքային անհրաժեշտությունից», որոշում է կայացրել հայտերի անփոփ գնահատման նիստը հետաձգել:

Սակայն, հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է և ոչ թե հետաձգվում և միայն պատվիրատուի ղեկավարի հրամանով, որը պարտադիր պետք է գրանցված լինի պատվիրատուի հրամանագրքում:

11. 09.10.2014 թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 1-3 չափաբաժիններով ներկայացված ապրանքատեսակները չեն բավարարում հրավերով սահմանված նվազագույն տեխնիկական պահանջներին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային առաջարկում յուրաքանչյուր առանձին չափաբաժնի վերաբերյալ ներկայացվել են նույնիսկ տեխնիկայից բավական հեռու մարդուն հասկանալի, մանրամասն համեմատական աղյուսակներ, որտեղ կետ առ կետ, կատարվել է սարքավորումների պահանջվող նվազագույն տեխնիկական բնութագրերի և Optoma և NEC պրոեկտորների համապատասխան բնութագրերի մանրամասն համեմատությունը:

Նշված համեմատական աղյուսակներից, ըստ ընկերության պարզ երևում է, որ NEC PX750U թվային պրոեկտորը պայծառությամբ, լրացուցիչ առանձնահատկություն-ներով, մուտքային/ելքային տերմինալներով և այլն, զգալի գերացանցում է թե պահանջվող մինիմալ, թե Optoma EH7700 թվային պրոեկտորի բնութագրերը, NEC PA522U և NEC P501X թվային պրոեկտորները ոչ միայն հիմնական տեխնիկական (պայծառություն, մաքսիմալ կետայնություն, լամպի շահագործման ժամկետ և այլն), այլև գրեթե բոլոր ցուցանիչներով զգալի գերացանցում է թե պահանջվող մինիմալ, թե Optoma EH505 և Optoma X501 թվային պրոեկտորների բնութագրերը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ 09.10.2014թ. N 3 արձանագրությունում բացակայում է նույնիսկ մեկ խոսք այսպես կոչված «մասնագիտական եզրակացության» մասին:

Ընկերությունը նաև նշել է, որ ուղղակիորեն խախտելով Կարգի 36-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ գնահատող հանձնաժողը N 3 արձանագրությանը կից մասնակիցներին չի տրամադրել զեկուցագիրը և իրավական եզրակացությունը:

Ս.թ. հոկտեմբերի 10-ն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն էլեկտրոնային նամակով պաշտոնապես դիմել է գնահատող հանձնաժողին և խնդրել է տրամադրել հանձնաժողովի 01.10.2014թ. թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետում նշված իրավասու մասնագիտացված մարմինների կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ներկայացված սարքավորումների վերաբերյալ:

Ի պատասխան «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի վերոնշյալ էլեկտրոնային նամակի՝ ս.թ. հոկտեմբերի 13-ին և կրկին, աշխատանքային օրվա հենց ավարտին, գնահատող հանձնաժողովն էլեկտրոնային նամակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ուղարկել է տեխնիկական եզրակացությունը, որը ստորագրված է ԵՊԲՀ «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա. Աղայանի կողմից:

Ըստ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի՝ պարոն Աղայանը չի հանդիսանում պրոեկցիոն տեխնոլոգիաների ասպարեզում որակավորված մասնագետ և նրա եզրակացությունը, որն էլ հիմք է հանդիսացել «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 3 արձանագրության 2.1 կետի ընդունման համար, ոչ մի դեպքում չի կարող որևիցե որոշման հիմք ծառայել տվյալ հանգամանքներում և փոխարինել Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պահանջվող իրավասու (մասնագիտացված) մարմինների եզրակացությունը :

Ընկերությունը, չցանկանալով անտեսել նույնիսկ նշված եզրակացությունը, ներկայացրել է այնտեղ բերված համեմատական աղյուսակի վերլուծությունը:

Հավելված N1

	Մինիմալ տեխնիկական պահանջներ	Թվային ինստալացիոն պրոեկտոր Optoma EH 7700 with STO/ST1 Motorized Focus / Zoom Lens	Hollywood Quality Video (HQV) ինստալացիոն թվային պրոեկտոր NEC PX 750U with NP18ZL Motorized Focus / Zoom Lens
«Եզրակացությունում» և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ գնային առաջարկում ներկայացված համեմատական աղյուսակների տվյալները	Էլեկտրական կառավարմամբ ոսպնյակ / Motorized Focus / Zoom Lens - High quality - Throw Ratio: 1.45 - 1.95; - 1.33 x zoom	- Throw Ratio: 1.45 - 1.95; - 1.33 x Motorized zoom and focus	- Throw Ratio: 1.73 - 2.27; - 1.31 x Motorized zoom and focus
«Եզրակացությունում» և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ գնային առաջարկում ներկայացված համեմատական աղյուսակների տվյալները	Կոնտրաստը՝ / Contrast – 5,000:1;	5,000:1	2,100:1
«Եզրակացությունում» (բնօրինակ արտահայտություն՝ Լամպի տեսակը) և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ գնային առաջարկում ներկայացված համեմատական աղյուսակների տվյալները	Լամպի հզորությունը / Lamp power – 2 x 350 Watt (հրավերի բնօրինակ արտահայտություն -Լամպի տեսակը – Lamp type)	2 x 350 W	2 x 400 W
«Եզրակացությունում» ներկայացված տվյալները ՝ Մուտքային, ելքային տերմինալներ	2 x HDMI	-	1 x HDMI
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ գնային առաջարկում ներկայացված	Մուտքային, ելքային տերմինալներ / Input, output	Input terminals : 2 x HDMI; 1 x 5BNC ; 1 x Component	Input terminals: Digital: 1 x DisplayPort; 1x

համեմատական աղյուսակների տվյալները	terminals: 2 x HDMI, 5BNC, Component Video, 2 x VGA (YPbPr/RGB), S-Video, Composite, VGA Out, RJ45, RS232, +12v Tigger, Wired remote	Video; 2 x VGA (YPbPr/RGB); 1 x S-Video (4 pin Mini DIN); 1 x Composite; Output terminals: 1 x VGA Out; +12V trigger Control: 1 x RJ45; 1 x RS232; Wired Remote (3.5mm jack)	HDMI™ (V.1.3) supporting HDCP; RGB: 2 x Mini D-sub 15 pin (VGA); 1 x 5BNC, shared with Component Signal (YPbPr); Video: Composite RCA x 1 + S-VIDEO x 1; Output terminals: RGB: Mini D-sub 15-pin x 1; Communication terminals: : 2 x Type A (USB 2.0 high speed); 1 x D-Sub 9 pin (RS-232); 1 x Network (RJ45, W-LAN optional); Remote Control - 1 x 3.5 mm Stereo Mini Jack; Option Slot: Input: 1 x Slot for optional STv2 or HD/SD-SDI Module;
«Եզրակացությունում» ներկայացված տվյալները՝ Շեղումների շտկում V=±30°; H=±40°;	V=±30°; H=±40°;	-	V=±30°; H=±35°;
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ գնային առաջարկում ներկայացված համեմատական աղյուսակների տվյալները	Ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում / Vertical and Horizontal Keystone Correction – V=±30°, H=±40°,	V=±20°	V=±30°; H=±35°; -Պատկերի ծրագրային երկրաչափական շտկում՝/ Geometric correction by software; - Cornerstone (Trapezoidal) Correction.

12. Վերոհիշյալ 2 հատ պրոֆեսիոնալ ինստալացիոն պրոեկտորները մոտորիզացված ոսպնյակներով նախատեսված է տեղադրել ԵՊԲՀ գլխավոր դահլիճում տեղադրված 2 հատ Mitsubishi XL-5980 պրոֆեսիոնալ ինստալացիոն LCD թվային պրոեկտորների փոխարեն՝ բեմից ֆիքսված հեռավորության վրա և ընդամենը 2 տոկոս տարբերությունը (1.33 x zoom ընդդեմ 1.31 x zoom) ոսպնյակի խոշորացման ցուցանիշում տվյալ դեպքում բացարձակապես ոչ մի դեր չի խաղում:

13. Հաշվի առնելով այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի կազմում մեծամասնությամբ ընդգրկված են լինելու պրոեկցիոն տեխնոլոգիաներից բավականին հեռու մարդիկ, գնային առաջարկում գնահատող հանձնաժողովի ուշադրությանն էր ներկայացված նույնիսկ ծանոթագրություն կոնտրաստի գործակցի վերաբերյալ, նշվելով, որ համաձայն աշխարհի խոշորագույն համակարգչային սարքավորումներ արտադրող ամերիկյան Hewlett-Packard ընկերության հեղինակավոր հետազոտության արդյունքների՝ մարդու աչքը պարզապես չի կարող տարբերել 1,000:1-ից բարձր կոնտրաստի գործակից (հարաբերությունը լրիվ սև/լրիվ սպիտակ դաշտերի միջև): Ավելին, լայնաէկրան թվային կինոթատրոններում օգտագործվող

հատուկ թվային կինոպրոեկտորներն (DCI certified), որոնք արտադրվում են աշխարհում միայն երեք ընկերությունների կողմից՝ (Christie, Barco, NEC), կոնտրաստի գործակիցը չի գերազանցում 2,500-3,000:1, այն էլ լրիվ մութ դահլիճներում օգտագործման պարագայում, և եզրակացությունն այն մասին, թե որոշ արտադրողների թվային պրոեկտորների բնութագրերում նշված 15,000:1 ու նման կոնտրաստի գործակիցները, այսպես կոչված, «մարքեթինգային քայլեր» են, թե պարզապես խաբեբայություն, թողնված էր հենց գնահատող հանձնաժողովի դատողությանը:

Ավելին, ի ապացույց վերոհիշյալ հետազոտության, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պատրաստ է բողոքը քննող հանձնաժողովին ցուցադրել զգալի տարբեր կոնտրաստի գործակիցներ ունեցող պրոեկտորների աշխատանքը:

14. Առարկություններ չկան: NEC PX750U պրոեկտորի լամպն, իրոք, 50 W ավելի հզոր է, քան Optoma EH 7700 պրոեկտորի լամպը: Սակայն, այդ հանգամանքը թույլ է տալիս NEC PX750U պրոեկտորին արտացոլել 7500 lumen լույսային հոսք՝ ընդդեմ Optoma EH 7700 ընդամենը 7000 lumen լույսային հոսքի:

15. Ինչպես պարզ երևում է բերված համեմատական աղյուսակից, NEC PX750U պրոեկտորն ունի անհամեմատելի ավելի լայն մուտքային/ելքային տերմինալների ընտրանի, քան Optoma EH 7700 պրոեկտորը:

Ինչ վերաբերվում է Optoma EH 7700 պրոեկտորի 2 x HDMI թվային մուտքային տերմինալների ընդդեմ NEC PX750U պրոեկտորի 1 x HDMI մուտքային տերմինալի, ապա վերջինս զինված է անհամեմատելի ավելի նոր թվային 1 x DisplayPort մուտքային տերմինալով, որն ոչ միայն թույլ է տալիս HDMI ազդանշան փոխանցել (համապատասխան փոխանցիչի առկայությամբ՝ արժողությունը մոտ 15-20 ԱՄՆ դոլար), այլև ավելի բարցր կետայնության ազդանշան փոխանցել անչափ ավելի մեծ արագությամբ, քան ի սկզբանե կենցաղային սարքավորումների համար ստեղցված HDMI տերմինալը:

16. Իրոք, NEC PX750U պրոեկտորի հորիզոնական սեղանային շեղումների շտկման հնարավորություններն ընդամենը 5 աստիճանով պակաս են մինիմալ տեխնիկական պահանջներից, սակայն այդ պակասությունն ավելի, քան

կոմպենսացվում է պատկերի ծրագրային երկրաչափական շտկումով (Geometric correction by software) և այսպես կոչված անկյունաքար շտկումով (Cornerstone Correction), որոնք բացարձակապես բացակայում են Optoma EH 7700 պրոեկտորում: Բացի այդ, Optoma EH 7700 պրոեկտորը ունի միայն ուղղահայաց սեղանային շեղումների շտկում, այն էլ ընդամենը V=±20°, իսկ հորիզոնական սեղանային շեղումները (H) այդ սարքավորումում պարզապես բացակայում են, հետևաբար՝ ղեկավարվելով հանձնաժողովի և նշված եզրակացության տրամաբանությամբ, կարելի է վստահորեն պնդել, որ Optoma EH 7700 պրոեկտորը չի համապատասխանում «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին:

Ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությունն բևեռել է այն փաստին, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար արժեքը կազմում է 1.6 մլն ՀՀ դրամ («Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայումս դեռ անհասկանալի պատճառներով չքննարկված առաջարկի դեպքում) և 4,9 մլն ՀՀ դրամ («Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկի դեպքում)՝ ի վնաս պետությանը:

Չափաբաժին N2

	Մինիմալ տեխնիկական պահանջներ	**Full 3D** թվային **ինստալացիոն** պրոեկտոր **Optoma EH505** with **Standard** (1.54 - 1.93:1) Manual Lens	**Full 3D Cinema Quality** թվային **ինստալացիոն** պրոեկտոր **NEC PA522U** with **NP13ZL** Manual Lens
«Եզրակացությունում» և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակների*** տվյալները	DLP™ Technology by Texas Instruments, 0.67" WUXGA, DC3,Type A chip	DLP™ Technology by Texas Instruments, **0.67**" WUXGA, DC3,Type A chip	3 x 1.93 cm (**0.76**") LCD TFT Panel with Micro Lens Array (MLA)
«Եզրակացությունում» ներկայացված տվյալները	**DVI-D 2 X VGA (RGB/YPbPr)**		1 x Mini D-sub 15-pin
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակների*** տվյալները	**Մուտքային, ելքային տերմինալներ՝ / Input, output terminals:** HDMI (1.4a 3D support), DVI-D, DisplayPort, 5BNC, Component Video, 2 x VGA (RGB/YPbPr), S-Video, Composite, 5 x Audio In (RCA/3.5mm), Audio Out 3.5mm, VGA Out, RJ45, RS232, USB (Remote Mouse), +12v Trigger, Wired Remote, 3D-Sync	**Input terminals:** 1 x HDMI , 1 x DVI-D, 1 x DisplayPort, 1 x 5BNC, 1 x Component Video, 2 x VGA (RGB/YPbPr), 1 x S-Video, Composite, **Output terminals:** 1 x VGA Out, +12v Trigger, 1 x Wired Remote, **3D-Sync**; **Control**: 1 x RJ45, 1 x RS232, 1 x USB (Remote Mouse).	**Input terminals:** **RGB**: 1 x 5BNC, shared with Component Signal (YPbPr); 1 x Mini D-sub 15-pin, compatible to component (YPbPr); **Digital**: 1 x DisplayPort; 1 x **HDBaseT**; **2** x HDMI™ supporting HDCP; **Video**: 1 x BNC R Share, 1 x BNC G/B Share; **Audio:** 1 x DisplayPort Audio support; 1 x HDBaseT audio support; 2 x 3.5 mm Stereo Mini Jack for Computer analog; 2 x HDMI audio support; **Output terminals:** - 1 x HDMI; 1 x 3.5 mm Stereo

			Mini Jack (variable); **3D Sync** - 1 x Mini DIN 3pin; **Control:** 1 x D-Sub 9 pin (RS-232), Ethernet (RJ-45), **USB** - 1 x Type A (USB 2.0 high speed)

17. Որևիցե խտրականության ցուցաբերումը հեղուկ-բյուրեղային (LCD) տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորների նկատմամբ անթույլատրելի է, քանի որ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, գնահատող հանձնաժողովը որևիցե պարզաբանում չի ներկայացրել այդ կապակցությամբ:

18. Նշված DVI-D 2 X VGA (RGB/YPbPr) մուտքային կամ ելքային տերմինալը պարզապես գոյություն չունի: Ըստ հավանականության, այսպես կոչված եզրակացության հեղինակը պարզապես միացրել է իրար անհամատեղելի թվային (DVI-D) և անալոգային (VGA) տերմինալները:

Ինչ վերաբերվում է երկրորդ VGA մուտքին, ապա անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել սովորական VGA-RGBHV փոխանցիչ 15-20 ԱՄՆ դոլար արժողությամբ, իսկ անալոգային (VGA) տերմինալը մոտակա ժամանակներում այլևս պարզապես չի տեղադրվելու թվային սարքավորումների վրա, իսկ NEC PA522U պրոեկտորն ունի անհամեմատելի ավելի լայն մուտքային/ելքային տերմինալների ընտրանի, քան Optoma EH 505 պրոեկտորը:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի արժեքը կազմում է 1,2 մլն ՀՀ դրամ («Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկի դեպքում)՝ ի վնաս պետությանը:

Չափաբաժին N3

	Մինիմալ տեխնիկական պահանջներ	**Full 3D** թվային **ինստալացիոն** պրոեկտոր **Optoma EH505** with **Standard** (1.54 - 1.93:1) Manual Lens	**Full 3D Cinema Quality** թվային **ինստալացիոն** պրոեկտոր **NEC PA522U** with **NP13ZL** Manual Lens
«Եզրակացությունում» և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակներ***ի տվյալները	DLP™ Technology by Texas Instruments, Single 0.55" XGA;	Single **0.55"** DLP® Chip by Texas Instruments™	3 x 1.6 cm (**0.63"**) LCD TFT Panel with Micro Lens Array (MLA)
«Եզրակացությունում» և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակների*** տվյալները	Կոնտրաստ՝ / Contrast – **15,000:1**	**15,000:1**	**4,000:1**
«Եզրակացությունում» և «Ֆիրմա	Ներկառուցված		

Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակներ***ի տվյալները	բարձրախոսների քանակ և հզորություն / AUDIO: **30W** (2x15W stereo)	**2** x **15 W**	**1 x 16 W** speaker
«Եզրակացությունում» ներկայացված տվյալները	**V=±40°;**	-	**V=±30°;**
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **գնային** առաջարկում ներկայացված ***համեմատական աղյուսակների*** տվյալները	ՈՒղղահայաց սեղանային շեղումների շտկում / Vertical Keystone Correction - **± 40°**	**V=± 40°**	**V=±30°;** **H=±30°;** **- Պատկերի ծրագրային երկրաչափական շտկում՝**/ Geometric correction by software;

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված աղյուսակի 1 և 2 տողերն արդեն իսկ մեկնաբանել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ բացատրություններում և կրկին պարզաբանման անհրաժեշտություն չի տեսնում:

19. Առարկություններ չկան: Միևնույն ժամանակ ընկերությունը հարկ է համարել նշել, որ NEC P501X թվային պրոեկտորը ոչ միայն հիմնական տեխնիկական (պայծառություն, մաքսիմալ կետայնություն, լամպի շահագործման ժամկետ և այլն), այլև գրեթե բոլոր ցուցանիշներով զգալի գերացանցում է թե պահանջվող մինիմալ, թե Optoma X501 թվային պրոեկտորի բնութագրերը:

20. NEC P501X պրոեկտորի ուղղահայաց սեղանային շեղումների շտկման հնարավորությունները, իրոք, 10 աստիճանով պակաս են մինիմալ տեխնիկական պահանջներից, սակայն այդ պակասությունը ավելի քան կոմպենսացվում է հորիզոնական շեղումների շտկման հնարավորություններով (H=±30°), ինչպես նաև պատկերի ծրագրային երկրաչափական շտկումով (Geometric correction by software), որոնք բացարձակապես բացակայում են Optoma X501 պրոեկտորում:

Ընկերությունը բևեռել է բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությունն այն փաստին, որ 3-րդ չափաբաժնի արժեքը կազմում է 200 հազար ՀՀ դրամ («Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկի դեպքում)՝ ի վնաս պետությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն

օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ ութ տարի առաջ և այս տարվա հունիսին հենց Ընկերության կողմից հաշվարկվել և Պատվիրատուին է ներկայացվել գլխավոր դահլիճը երկու հատ պրոֆեսիոնալ ինստալացիոն թվային պրոեկտորների զինելու նախագծերը և այդ նախագծերը միանշանակ պարունակում էին օբյեկտիվորեն հիմնավորված սարքավորումներ, որոնք, իրենց հերթին, ևս միանշանակ համարժեք էին Պատվիրատուի կարիքներին, սակայն, ինչքանով է օբյեկտիվորեն հիմնավորված ընդհանուր առմամբ 6.3 միլիոն ՀՀ դրամ ավելի թանկ և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առաջարկած սարքավորումներին ոչ համարժեք ապրանքների գնումը:

Գնահատող հանձնաժողովի կողմից թե՛ էլեկտրոնային նամակով ուղարկված, թե՛ առձեռն տրամադրված փաստաթղթերում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին չհաջողվեց հայտնաբերել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկում որևիցե անհամապատասխանություն: Ս.թ. հոկտեմբերի 10-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն էլեկտրոնային նամակով պաշտոնապես դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տալ պարզաբանում, ինչ է նշանակում՝ ««Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկում առկա են անհամապատասխանություններ կից ներկայացված գնի հաշվարկում» արտահայտությունը: Ինչ անհամապատասխանություն է գտել հանձնաժողովը և ինչ կից ներկայացված գնի հաշվարկի մասին է խոսքը գնում, եթե շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում մասնակիցը, ըստ գործող օրենսդրության, ներկայացնում է միայն դիմում և գնի առաջարկ:

12.10.2014թ. էլեկտրոնային նամակով կրկին՝ աշխատանքային օրվա ավարտին, գնահատող հանձնաժողովը պահանջել է ներկայացնել այն իրավական հիմքերը, որոնց համաձայն վերջինս պարզաբանում է խնդրել այլ իրավաբանական անձի 1-ին չափաբաժնի գնային առաջարկի անհամապատասխանության վերաբերյալ, քանի որ հանձնաժողովի կողմից մասնակցի տվյալ չափաբաժնի չքննարկելը ոչ մի կերպ չի ազդում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային առաջարկի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշման վրա:

Ընկերությունը կարծում է, որ մեկնաբանությունները այստեղ միանշանակ ավելորդ են և բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ հարցի արժեքը այստեղ կայանում է 2.2 միլիոն ՀՀ դրամ ավելի թանկ առաջարկված նույն սարքավորումը գնելու միտման մասին և եթե անհամապատասխանության փաստ տեղի չի ունեցել, ապա գնահատող հանձնաժողի վերը նշված դրվագները համապատասխան պետական կառույցների կողմից չեն գնահատվի որպես պարզապես փաստաթղթերի կեղծիք:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուն ուղղակիորեն և դիտավորյալ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կարգի հետևյալ պահանջները՝

- Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները,
- Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները,
- Կարգի 35.1-րդ կետի պահանջները,
- Կարգի 36-րդ կետի 1-ին ենթակետի և 3-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները,
- Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա Ընկերությունը պահանջել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2014թ. թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետով՝ հայտերի ամփոփ գնահատման նիստը հետաձգելու մասով, 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետով, 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը հայտնաբերված անհամապատասխանությունների պատճառով չքննարկելու և նույն արձանագրության 3-րդ կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասերով, կայացրած որոշումները հայտարարել չեղյալ, ինչպես նաև պարտադրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ներկայացնել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի գնային առաջարկում հայտնաբերված անհամապատասխանությունների փաստը հաստատող փաստաթղթեր:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ը 20.10.2014թ. N 09/2650 գրությամբ Ընկերության ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

22.09.2014թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքում առկա են դրվագներ 25.06.2014 թվականին կազմակերպված գնման ընթացակարգից, Պատվիրատուն հայտնել է, որ բողոք բերող ընկերության տրամաբանությամբ և պնդմամբ ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կարգի մի շարք կետերի պահանջներ, որոնք խախտվել են նաև 25.06.2014թ. կազմակերպված ՇՀԱՊՁԲ-11/12(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ երկու դեպքում էլ գնահատող հանձնաժողովների կողմից կիրառվել են նույն մասնագիտական և օրենսդրությանը համապատասխանող մոտեցումները: Այսպես, օրինակ, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքերում հրապարակվել են ոչ թե նույն /կամ հաջորդ/ աշխատանքային օրը, այլ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Առաջանում է հարց, թե ինչու «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն չի բողոքարկել ՇՀԱՊՁԲ-11/12(ԵՊԲՀ) ծածկագրով գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը: Պատճառը հավանաբար կայանում է նրանում, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, որը հանդիսանում է երկու վերոնշյալ ընթացակարգերի մասնակից, առաջին գնման ընթացակարգի ժամանակ չէր հանդիսանում որպես նվազագույն գնային

առաջարկ ներկայացնող մասնակից, և հանձնաժողովի կողմից Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառումը կնշանակեր «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հետագա մասնակցության ավարտը տվյալ ընթացակարգին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ 2014թ. հունիս ամսին կատարել է շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նախնական պահանջվող ապրանքատեսակների շուկայական գների վերաբերյալ տեղեկատվություն, որտեղից պարզ երևում է բոլոր ապրանքատեսակների առանձին և ընդհանուր շուկայական արժեքները: Ընդհանուր արժեքը կազմել էր 9.119.761 ՀՀ դրամ: Ս.թ. հունիսի 25-ին հայտարարվեց ՇՀԱՊՁԲ-11/12(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգ, ինչի արդյունքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը՝ 9.876.360 ՀՀ դրամ, անհասկանալի պատճառներով գերազանցեց իր իսկ կողմից մի քանի օրվա տարբերությամբ պաշտոնապես ներկայացված շուկայական արժեքը: Տվյալ ընթացակարգի մասնակից հանդիսացող «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի գնային առաջարկը, թեև նվազագույնն էր, սակայն գերազանցում էր տվյալ ապրանքատեսակների համար նախատեսված ֆինանսական միջոցները, այդ իսկ պատճառով 11.07.2014թ. նշանակվեցին միաժամանակյա բանակցություններ: Սահմանված ժամկետում նոր գնային առաջարկ ներկայացրեց միայն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, և միայն երկրորդ չափաբաժնի համար: Արդյունքում, առաջին չափաբաժինը հայտարարվեց չկայացած: Հետագայում՝ 11.07.2014թ., կատարվել է նոր շուկայի ուսումնասիրություն՝ չկայացած չափաբաժնի համար, որի արդյունքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է կրկին անհասկանալի ավելի բարձր շուկայական արժեք: Հաշվի առնելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային անհասկանալի կտրուկ տատանումները՝ որոշում կայացվեց ժամանակավորապես դադարեցնել գնման ընթացակարգը և կազմակերպել շուկայի ուսումնասիրություն՝ ներգրավելով պրոեկցիոն համակարգեր ներկայացնող մասնակիցների ավելի լայն շրջանակ: Հաշվի առնելով, որ թե՛ «Գնումների մասին» ՀՀ օրենքում և թե՛ Կարգով սահմանված չէ շուկայի ուսումնասիրության պարտադիր մեթոդաբանություն, ինչպես նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի արդեն իսկ ներկայացրած գնային և հնարավոր տեխնիկական տարբեր

առաջարկները, վերջինս չներառվեց շուկայի ուսումնասիրության ընթացքում ներգրավված մասնակիցների շրջանում:

Պատվիրատուն նշել է, որ «ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգով 1-ին չափաբաժնում նշված թվային պրոեկտորները նախատեսվում է տեղադրել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գլխավոր դահլիճում, որտեղ անց են կացվում ուսանողական, բժշկական, միջազգային, ինչպես նաև կառավարական մակարդակի միջոցառումներ: Ձեռք բերվող պրոեկտորները նախատեսվում է շահագործել շուրջ 10 տարի և վերջիններիս նվազագույն պահանջների ընտրությունը պետք է իրականցվի համալսարանի համապատասխան պատասխանատու ստորաբաժանման կողմից, այլ ոչ թե առևտրային գործունեություն ծավալող կազմակերպության: Ի դեպ, տվյալ գծով պատասխանատու անձ է հանդիսանում «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա.Աղայանը, ով գրեթե 10 տարի հաջողությամբ ապահովում է գլխավոր դահլիճում, ինչպես նաև ողջ համալսարանի տարածքում անցկացվող միջոցառումների տեխնիկական մասը: Այդ իսկ պատճառով համալսարանը նպատակահարմար է համարում մասնագիտական եզրակացությունների և պատասխանատու ստորաբաժանման գործառույթները պատվիրակել տվյալ բաժնին:

Ինչ վերաբերվում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 8 տարի առաջ ձեռք բերված և գլխավոր դահլիճում տեղադրված Mitsubishi LCD թվային պրոեկտորների աշխատանքին, ապա առկա են, չնայած բանավոր, բայց բազմաթիվ բողոքներ միջոցառումների կազմակերպիչների կողմից, ինչն էլ պատճառ է հանդիսացել վերջիններիս փոխարինելուն: Շուկայի ուսումնասիրության արդյունքում կազմակերպության կողմից ներկայացվեց բոլոր պահանջներին համապատասխանող և միջոցառումների հետ կապված պրոեկցիոն համակարգերի աշխատանքի առկա խնդիրները լուծող առաջարկ, ինչի արդյունքում ձևավորվեց լիովին նոր նախագիծ՝ տեխնիկական առաջադրանք: Ըստ Պատվիրատուի՝ 8 տարի պրոեկցիոն բնագավառում օգտվելով մեկ կազմակերպության ծառայություններից, կատարվեց ճիշտ քայլ՝ ուսումնասիրելով և ընտրելով մասնակիցների ավելի լայն շրջանակ:

Ս.թ. սեպտեմբերի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ) ծածկագրով գնման ընթացակարգ: Ուսումնասիրություններից հետո պահանջվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը կազմված և ներկայացված են եղել համապատասխան պատասխանատու ստորաբաժանման կողմից: Բնութագրերում պահանջվող նվազագույն բնութագրիչները հասանելի են եղել գրեթե բոլոր պրոեկցիոն համակարգ արտադրող և ներկայացնող կազմակերպություն-ներին, քանի որ նրանցում բացակայում են ֆիրմային անվանմանը, ծագման երկրին, կոնկրետ աղբյուրին, կամ արտադրողին որևէ հղում, ինչի մասին վկայում է 4 մասնակիցներից 3-ի գնային առաջարկով ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված մինիմալ տեխնիկական պահանջ-ներին:

Ինչ վերաբերվում է Կարգի 35.1-րդ կետին, ապա 18.04.2013թ. N 372-Ն որոշմամբ նշված գործառույթները իրականացվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից, իսկ թե ինչ պատճառով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին չի տեղեկացվել շուկայի ուսումնասիրության վերաբերյալ, արդեն իսկ պարզաբանվել է Պատվիրատուի կողմից: Այն պնդումը, որ բնութագրերն ամբողջովին արտագրված են (OPTOMA Corp.) մակնիշի պրոեկտորներից, ընդամենը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի եզրակացությունն է, ինչի մասին է վկայում հենց բողոքարկողի կողմից նշված (աննշան սխալներով) արտահայտությունը, և բնութագրերում առկա չեն որևիցե ֆիրմային (Optoma) անվանման հղումներ:

Հրավերում տեղադրման և այլ ոչ պարտադիր պայմանների բացակայության վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է, որ տեղադրումը կարող է իրականացվել Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման կողմից, իսկ բնութագրով նախատեսված պարտադիր պայման հանդիսացող 30 ամիս երաշխիքային ժամկետը բավական է ցանկացած այլ խնդրի լուծման համար:

«Optoma» ընկերության պաշտոնական սպասարկման կենտրոնի հնարավոր բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ գնային առաջարկով «Optoma» մակնիշի պրոեկտոր ներկայացնող մասնակցի գնային առաջարկի մերժման:

26.09.2014թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն էլեկտրոնային նամակով դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տալ պարզաբանում ընթացակարգի հրավերի վերաբերյալ: Թե ինչու է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն թաքցնում պահանջվող պարզաբանման և համապատասխան տրված պատասխանի ողջ բովանդուկությունը՝ պարզ չէ, սակայն ողջ բովանդակությունից պարզ երևում է, որ գնահատող հանձնաժողովը տրամադրել է լիարժեք պարզաբանում:

Հանձնաժողովի կողմից «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը չքննարկելը պայմանավորված է եղել նրանով, որ մասնակցի փաթեթում, բացի հրավերով սահմանված 5-րդ և 5.1-րդ հավելվածներից, ներկայացվել էր նաև պայմանագրի նախագծի հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցը, նշելով ավելի կարճ մատակարարման ժամկետ՝ 22 օր, ինչպես նաև ապրանքատեսակների միավորի և պայմանագրի ընդհանուր արժեքները, որտեղից ի հայտ եկավ գնային անհամապատասխանություն՝ միայն առաջին չափաբաժնի վերաբերյալ: Մասնակիցը 5.1 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել էր 10.650.000 ՀՀ դրամ ընդհանուր գին, այն դեպքում, երբ գնային առաջարկին կից գնման ժամանակացույցով պայմանագրի կատարման համար ընդհանուր գին էր ներկայացրել 21.300.000 ՀՀ դրամ: Գնահատող հանձնաժողովի պահանջով մասնակիցը ներկայացրեց անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում, որտեղից պարզ երևում է, որ մասնակիցը ներկայացրել է ինքնաարժեքից ցածր գին: Հիմք ընդունելով տրամադրված փաստաթղթերով արտացոլվող անհամապատասխանությունը՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի տնօրեն Տ.Խանոյանի 01.10.2014թ. գրավոր դիմումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, հանձնաժողովը որոշեց չքննարկել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկն 1-ին չափաբաժնի մասով:

Պատվիրատուն հայտնել է, որ 01.10.2014 թ. թիվ 2 արձանագրության 1.3 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է ամփոփ գնահատման նիստը հետաձգել՝ հաշվի առնելով հենց «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած որպես համարժեք ապրանքատեսակների 12 էջից բաղկացած առաջարկը: Բողոքարկողը մեջբերում է և

շարադրում է Կարգի 110-րդ հոդվածի 4-րդ կետը, որում անտեսում է որոշման մեջ նշված «հրավերին համապատասխանող հայտեր» արտահայտությունը: Մասնակցի հայտի հրավերին համապատասխան լինելու պայմաններից մեկն է նաև տեխնիկական բնութագրի նվազագույն պայմանների համապատասխանությունը, որի գնահատումը՝ պայմանավորված նշված ծավալով, հասկանալի պատճառներով հնարավոր չէ ուսումնասիրել մեկօրյա ժամկետում, ուստի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը չի հակասում Կարգի 110-րդ հոդվածի 4-րդ կետին, ինչի հետևանքով բողոքարկողի կողմից վերը նշված կարգի 36-րդ կետի և հետագայում նշված 36-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության կիրառման մասով հանձնաժողովը գործել է օրենսդրության տրամաբանության շրջանակներում:

Պատվիրատուի համար անհասկանալի է նաև այն հանգամանքը, թե ինչու է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնային առաջարկում ներկայացրել համեմատական աղյուսակ «NEC» և «OPTOMA» պրոեկտորների համար, այն դեպքում, երբ հրավերով չի պահանջվել «OPTOMA» մակնիշի պրոեկտոր:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն իր գնային առաջարկում հենց ինքն է ներկայացրել իր կողմից առաջարկվող և պատվիրատուի կողմից պահանջվող այն անհամապատասխանությունները, որոնք չեն բավարարում տեխնիկական նվազագույն պահանջներին: Չնայած դրան, բողոքում նշվում է, որ դրանք ոչ միայն համապատասխանում են, այլ նաև գերազանցում են նվազագույն չափորոշիչները:

Այսպես, օրինակ՝ 1-ին չափաբաժնի համար նվազագույն պահանջ է հանդիսացել՝ կոնտրաստ 5000:1, որի վերաբերյալ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն իր տեխնիկական առաջարկում ներկայացրել է՝ 2000:1: Համեմատական տալու արդյունքում պնդում է, որ 2000:1 ցուցանիշը զգալի գերազանցում է 5000:1 նվազագույն ցուցանիշը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 10.10.2014թ. գնահատող հանձնաժողովին դիմել է խնդրանքով՝ տրամադրել 09.10.2014թ. թիվ 3 արձանագրություն 2.1-րդ կետում նշված մասնագիտական եզրակացությունը: Գնահատող հանձնաժողովը 13.10.2014թ., այլ ոչ թե բողոքարկողի կողմից նշված 12.10.2014 թ., քանի որ այդ օրը ոչ աշխատանքային օր էր, տրամադրել է եզրակացությունը: Ներկայացված փաստաթղթում առկա է 2 աղյուսակ, այլ ոչ թե բողոքարկողի կողմից ներկայացված 3-ը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից եզրակացության մեջ առկա զգալի անհամապատասխանությունները մերժող այսպես կոչված անհիմն հիմնավորումները անհասկանալի և անընդունելի են, քանի որ բողոքարկողի հիմնավորումները հակասում են իր իսկ բերված համեմատություններին: Այսպես, օրինակ, բողոքարկողը նշում է՝ լայնաէկրան թվային կինոթատրոններում օգտագործվող հատուկ թվային կինոպրոեկտորներ, որոնք արտադրվում են աշխարհում միայն երեք ընկերությունների կողմից (Christie, Barco, Nec), կոնտրաստի գործակիցը չի գերազանցում 2,500-3,000:1, սակայն իր տեխնիկական առաջարկի 2-րդ չափաբաժնի համար բողոքարկողը ներկայացրել է NEC PA522U մոդելի պրոեկտոր, որի կոնտրաստը ներկայացված է՝ 5000:1:

Բողոքում նշվում է ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկման պահանջվող գործակից ±20°, որը հրավերում սահմանվել է H=±40°, V=±30°: Պատճառն այն է, որ բողոքարկողը ևս մեկ անգամ փորձում է համոզել, որ պատվիրատուն պահանջով ներկայացրել է ֆիրմային անվանման հղում:

Պատվիրատուն, հաշվի առնելով բոլոր հանգամանքները և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհասկանակի պարզաբանումները, կարծում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին՝ որպես միայն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից հաղթող ճանաչելը, կհանգեցներ ոչ նպատակային գնման իրականացմանը և գնված ապրանքատեսակները պարզապես չէին ծառայի իրենց նպատակին: «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացված 4,9 մլն, 1,2 մլն և 200.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 6,3 մլն ՀՀ դրամի չափով իրականությանը չհամապատասխանող պետությանը հասցված վնասի չափն իրական կդառնար «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու դեպքում, շատ ավելի խոշոր, 11.076.000 ՀՀ դրամի՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի գնային առաջարկի հանրագումարի չափով:

Ինչ վերաբերվում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից գլխավոր դահլիճում նշված հաշվարկների և նախագծերի տրամադրման մասին, գնահատող հանձնաժողովը ոչ մի տեղեկատվություն չունի, իսկ եթե նույնիսկ այդ հաշվարկը կատարվել է, ապա այն կատարվել է՝ բխելով միայն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առևտրային շահերից, այլ ոչ թե

ուղղված է եղել Պատվիրատուի գլխավոր դահլիճում առկա և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ստեղծված թերությունների վերացմանը:

Պատվիրատուն խնդրել է՝ հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները և փաստարկները, բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկայի առանցք, ինչը հիմք կհանդիսանա ներկայացված բողոքը մերժելու համար:

3. ԳԲԽ-35/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 31.10.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 14.10.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի: Դադարեցնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը չքննարկելու և նույն արձանագրության 3-րդ կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասերով, կայացրած որոշումները:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը մնացած մասերով մերժել:

4. ԳԲԽ-35/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-35/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ն էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցել են «Ֆիրմա Ալֆա», «Ջի Վի Էն», «Կոմպասս» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունները:

2. 26.09.2014թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, դիմելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, խնդրել է տալ պարզաբանում՝ ինչով է պայմանավորված Հրավերի հավելված թիվ 1 «Տեխնիկական բնութագիր» ենթաբաժնում Պատվիրատուի կողմից միայն DLP տեխնոլոգիայով աշխատող թվային պրոեկտոներ ներկայացնելու պահանջը և արդյոք Պատվիրատուն ընդունում է մասնակիցների կողմից հեղուկ-բյուրեղային (LCD) 3 պանելների տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորների ներկայացումը:

Պատվիրատուն 27.09.2014թ. մասնակցին տրամադրել է պաշտոնական պարզաբանում այն մասին, որ Պատվիրատուի կողմից միայն DLP տեխնոլոգիայով աշխատող թվային պրոեկտոներ ներկայացնելու պահանջը պայմանավորված է նրանով, որ LCD տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորները պահանջում են պարտադիր և պարբերաբար տեխնիկական սպասարկում և չեն աշխատում առանց հատուկ՝ բավականին թանկարժեք ֆիլտրերի, որոնք նույնպես ենթակա են պարտադիր և պարբերաբար փոփոխման, իսկ DLP տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորները, որոնք չեն պահանջում պարտադիր և պարբերաբար տեխնիկական սպասարկում, ֆիլտրերի բացակայության պատճառով ունեն անչափ ավելի բարձր կոնտրաստի գործակից և այլ առավելություններ, զբաղեցնում են համաշխարային պրոեկտորների շուկայի 80 տոկոսը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք Պատվիրատուն ընդունում է մասնակիցների կողմից հեղուկ-բյուրեղային (LCD) 3 պանելների տեխնոլոգիայով աշխատող պրոեկտորների ներկայացումը, ապա Պատվիրատուն հայտնել է, որ այդ հարցի պատասխանը կտրվի մասնակից կազմակերպությանը (կազմակերպություն-ներին) ամփոփ արձանագրության տեսքով՝ համարժեք ապրանքատեսակներ

ներկայացնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանման (անձի) կողմից տրամադրված մասնագիտական եզրակացության հիման վրա:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2014թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետով որոշում է կայացվել, որ մասնակիցների ներկայացրած ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Միաժամանակ արձանագրության վերոնշյալ կետով որոշում է կայացվել. «Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով հայտերի ամփոփ գնահատման նիստը հետաձգել մինչև մասնակիցների կողմից որպես համարժեք ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը»:

4. Պատվիրատուի «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա.Աղայանի կողմից 09.10.2014թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրվել է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ «Ջի Վի Էն», «Կոմպասս» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունների ներկայացրած ապրանքատեսակները բավարարում են Հրավերով նախատեսված ապրանքների նվազագույն տեխնիկական պահանջներին, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առաջարկած ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանված ապրանքատեսակների նվազագույն տեխնիկական բնութագրիչներին:

Մասնագիտական եզրակացությանը կից գնահատող հանձնաժողովին ներկայացվել է նաև հետևյալ համեմատական աղյուսակը.

Հ/Հ	Պահանջված չափորոշիչ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համապատասխան չափորոշիչ
1	Էլեկտրական կառավարմամբ ոսպնյակ/Mootorized Focus/Zoom Lens-Hight quality 1.45-1.95 (1.33 x zoom)	Throw Ratio: 1.73-2.27 1,31x Mootorized zoom and focus
	Կոնտրաստը՝ / Contrast-5.000:1	2.100:1
	Լամպի տեսակը-2x350 Watt	2x400 Watt
	Մուտքային, ելքային տերմինալները 2xHDMI	1xHDMI

	Շեղումների շտկում H=±40°; V=±30°;	H=±35°; V=±30°;
2	DLP ™ Technology	LCD TFT Panel
	DVI-D 2xVGA (RGB/YPbPr)	1xMini D-sub 15-Pin
3	DLP ™ Technology	LCD TFT Panel
	Կոնտրաստը՝ / Contrast-15.000:1	4.000x1
	Ձայն 30W (2x15W stereo)	1x16W speaker
	շտկում V=±40°;	V=±30°;

5. Ընկերության ներկայացրած բողոքում նշված փաստարկներով և Կենտրոնում 20.10.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերությունն ընդունեց, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքատեսակները չեն համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.10.2014թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝

- 2.1-րդ կետով՝ հիմք ընդունելով «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա.Աղայանի կողմից տրամադրված մասնագիտական եզրակացությունը, որոշում է կայացրել ոչ համարժեք դիտարկել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար որպես համարժեք ներկայացրած ապրանքատեսակները, քանի որ դրանք չեն բավարարում Հրավերով սահմանված ապրանքատեսակների նվազագույն տեխնիկական պահանջներին,
- 2.2-րդ կետով որոշում է կայացրել չքննարկել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը՝ կից ներկայացված գնի հաշվարկում առկա անհամապատասխանությունների պատճառով:
- 3-րդ կետով որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումները

Քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 14.10.2014թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդ գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակիորեն հետևյալ հիմնավորմամբ.

1. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտված լինելու հանգամանքի վերաբերյալ բողոքում նշված պատճառաբանությունները (սույն որոշ., էջ 16-17) անհիմն են, քանի որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն մյուս մասնակիցների հետ մրցակցության հավասար պայմաններում մասնակցել է Պատվիրատուի կողմից վերը նշված ծածկագրով կազմակերպված գնման գործընթացին, իսկ գնման առարկայի բնութագրերը ձևակերպված են եղել հստակ և դրանում ամբողջությամբ նկարագրված են եղել ձեռքբերվող ապրանքատեսակները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Սակայն, նկատի ունենալով, որ Ընկերության ներկայացրած ապրանքատեսակները չեն համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին (սույն որոշ., էջ 28-29), իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան հայտերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետով որոշում է կայացրել ոչ համարժեք դիտարկել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար ներկայացրած ապրանքատեսակները:

Նման պայմաններում, քանի որ Ընկերության ներկայացրած ապրանքատեսակները չեն համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոնշյալ արձանագրության 2.1-րդ կետով կայացրած որոշումը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար ներկայացրած ապրանքատեսակները Հրավերով նախա-

տեսված ապրանքատեսակների տեխնիկական պահանջներին ոչ համարժեք դիտարկելու վերաբերյալ, համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Բացի այդ, ինչպես Ընկերության ներկայացրած բողոքում նշված փաստարկներով, այնպես էլ Կենտրոնում 20.10.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերությունն ընդունեց, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքատեսակները չեն համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին:

2. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն վերոնշյալ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտում թույլ չի տվել, քանի որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու խնդրանքով 26.09.2014թ. դիմել է Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին և վերջինս էլ այդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում՝ 27.09.2014թ., մասնակցին տրամադրել է պարզաբանում:

Ընկերության բողոքում նշված պատճառաբանությունն այն մասին, որ կատարված հարցմանը տրվել է հակասող պատասխան, որով և խախտվել են Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, անհիմն է, քանի որ Ընկերության կողմից բերված փաստարկը վերը նշված հոդվածի 1-ին մասով սահմանված իրավանորմերի հետ որևէ առնչություն չունի:

3. Կարգի 35.1-րդ կետի համաձայն՝ եթե գնվելիք ապրանքների նմանատիպ ապրանքախմբի գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա մինչև գնումների հրավերների հաստատումը, բացառությամբ շինարարական ծրագրերի, պատասխանատու ստորաբաժանումը պարտավոր է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության համապատասխան շուկաները և կազմել գրավոր երաշխավորություն տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների

շուկայական գների մասին՝ կցելով մանրամասն բացատրագիր նախահաշվային գնի ու շուկայական գնի համեմատության վերաբերյալ և ուսումնասիրությունը հիմնավորող փաստաթղթերը:

Կարգի վերոնշյալ կետի պահանջները խախտված լինելու հանգամանքի կապակցությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն բողոքում նշել է, որ Ընթացակարգը հայտարարելուց առաջ շուկայի որևիցե նոր ուսումնասիրության մասին Ընկերությանը ոչինչ հայտնի չի եղել կամ էլ Պատվիրատուի կողմից դրա մասին չի հայտնվել Ընկերությանն անհայտ պատճառներով:

Գտնում ենք, որ Ընկերության բերած պատճառաբանությունը նույնպես անհիմն է, քանի որ Կարգի վերոնշյալ կետով Պատվիրատուն պարտավոր չէ ուսումնասիրությունը կատարել կոնկրետ կազմակերպության միջոցով, ինչպես նաև մինչև գնումների հրավերների հաստատումը հրապարակելու իրականացրած շուկաների ուսումնասիրության արդյունքները, հետևաբար՝ նշված կետով սահմանված նման պահանջի բացակայության պարագայում, Պատվիրատուն չէր կարող խախտել Կարգի այդ կետով սահմանված պահանջները:

4. Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Ընտրված մասնակիցը (առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը) որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 36-րդ կետի՝

- 1-ին ենթակետի համաձայն՝ եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, ով՝ զեկուցագիրն ստանալու օրը՝ հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև հինգ աշխատանքային օրով, հանձնարարում է պատվիրատուի

իրավաբանական ծառայությանը (իրավաբանին կամ հրավիրված մասնագետին) մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր:

- 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝ հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը 01.10.2014թ. թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետով որոշում է կայացրել՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, հայտերի ամփոփ գնահատման նիստը հետաձգել մինչև մասնակիցների կողմից, որպես համարժեք ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը, որով խախտել է Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի և 36-րդ կետի 1-ին ենթակետի և 3-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

Ընկերությունն անտեսել է, որ Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովն ընտրված մասնակցին որոշում է հրավերին համապատասխան հայտեր ներկայացրած մասնակիցների թվից և Կարգի վերոնշյալ կետի 4-րդ ենթակետի պահանջը կատարելու ու հաղթող մասնակցին որոշելու նպատակով, հայտերի ամփոփ գնահատման նիստը հետաձգել է մինչև մասնակիցների կողմից որպես համարժեք ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը: Որից հետո՝ 09.10.2014թ., ստանալով մասնագիտական եզրակացությունը, գնահատող հանձնաժողովը նույն օրը կայացած նիստով՝ թիվ 3 արձանագրության 2.1-րդ, 2.2-րդ և 3-րդ կետերով կայացրել է համապատասխան որոշումներ: Այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն եղել են իրավաչափ և հայտերի բացման նիստը հետաձգելու արդյունքում Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները չեն խախտվել:

Ընկերության բողոքում նշված փաստարկն այն մասին, որ «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա. Աղայանը չի հանդիսանում որակավորված մասնագետ և նրա եզրակացությունը չէր կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետով որոշում կայացնելու համար, ապա նշված փաստարկի կապակցությամբ Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ գծով պատասխանատու անձ է հանդիսանում «ՈՒՄՏԱ» բաժնի պետ Ա. Աղայանը, ով շուրջ 10 տարի հաջողությամբ ապահովում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի գլխավոր դահլիճում, ինչպես նաև ողջ համալսարանի տարածքում անցկացվող միջոցառումների տեխնիկական մասը, ինչի պատճառով կազմակերպությունը նպատակահարմար է համարում մասնագիտական եզրակացությունների և պատասխանատու ստորաբաժանման գործառույթները պատվիրակել տվյալ բաժնին:

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 36-րդ կետի 1-ին ենթակետի և 3-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները խախտելու բողոքաբերի ներկայացրած փաստարկներին, ապա դրանք նույնպես անհիմն են, քանի որ Կարգի 36-րդ կետի վերը նշված ենթակետերը քննարկվող իրավահարաբերության հետ որևէ առնչություն չունեն և վերաբերում են գնահատող հանձնաժողովի գործողություններին իրավաբանական ծառայության (իրավաբանի կամ հրավիրված մասնագետի) կողմից իրավական եզրակացություն տալու իրավական խնդրին:

5. Ընկերության բողոքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի գնային առաջարկը չքննարկելու մասով, կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ գտնում ենք հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Գնահատող հանձնաժողովը 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով որոշում է կայացրել չքննարկել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը կից ներկայացված գնի հաշվարկում առկա անհամապատասխանությունների պատճառով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ Օրենքը չի նախատեսում մասնակիցների ներկայացրած հայտերը չքննարկելու մասին որոշում կայացանելու գնահատող հանձնաժողովի իրավասություն, ինչից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի գնային առաջարկը չքննարկելու մասով, ընդունված որոշումը չի համապատասխանում Օրենքի պահանջներին և ենթակա է դադարեցման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 14.10.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի: Դադարեցնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը չքննարկելու և նույն արձանագրության 3-րդ կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասերով, կայացրած որոշումները:

2. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը մնացած մասերով մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամներ՝ **Արթուր Բաղդասարյան**

Յուրի Զաքարյան